Ի՞նչ է տեղական ինքնակառավարումը.

A. համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը.
B. համայնքի սեփականությունը տնօրինելու, համայնքային նշանակության հարցեր լուծելու համար տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավունքն է.
C. տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

Տեղական ինքնակառավարումն իրականացվում է՝

A. **համայնքներում.**
B. բնակավայրերում.
C. մարզերում:

Ի՞նչ նպատակով է կազմակերպվում և իրականացվում ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողությունը.

A. տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականությունը ստուգելու.
B. տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետությունը ստուգելու.
C. **տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականությունը ստուգելու:**

Ի՞նչ նպատակով է կազմակերպվում և իրականացվում ՏԻՄ-երի՝ պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ մասնագիտական հսկողությունը.

A. պետության պատվիրակած լիազորությունների իրականացման արդյունավետությունը ստուգելու.
B. **պետության պատվիրակած լիազորությունների իրականացման արդյունավետությունն ու միասնականությունը ստուգելու.**
C. պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով պետական բյուջեից տրամադրված ֆինանսական միջոցների օգտագործման օրինականությունն ու արդյունավետությունը ստուգելու:

Որո՞նք են համայնքային քաղաքական պաշտոնները.

A. համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամների պաշտոնները.
B. համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի տեղակալի, համայնքի ավագանու անդամների պաշտոնները.

C. համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի տեղակալի, Երևանի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնները:

Տեղական ինքնակառավարման սկզբունքներից է՝

A. տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը, թափանցիկությունը և ինքնուրույնությունը.
B. տեղական ինքնակառավարման հրապարակայնությունը, արդյունավետությունն ու պատասխանատվությունը.
C. **տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հաշվետվողականությունը, հրապարակայնությունը և թափանցիկությունը:**

Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատում է՝

A. համայնքի ավագանին.
B. համայնքի ղեկավարը.
C. ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

Ո՞ր համայնքը պետք է ունենա պաշտոնական համացանցային կայք.

A. 3000 և ավելի բնակչություն ունեցող համայնքը.
B. 10000 և ավելի բնակչություն ունեցող համայնքը.
C. համայնքը՝ անկախ բնակչության քանակից:

Ի՞նչ իրավական ակտով են սահմանվում համայնքի կամավոր խնդիրները.

A. համայնքի ղեկավարի որոշմամբ.
B. համայնքի ավագանու որոշմամբ.
C. համապատասխան մարզպետի որոշմամբ:

Ե՞րբ է համայնքի ավագանին համարվում կազմավորված.

A. եթե ընտրվել են ավագանու բոլոր անդամները.
B. եթե ընտրվել են ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն երկու երրորդը.
C. եթե ընտրվել են ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին:

Ի՞նչ կարգավիճակ ունեն միջհամայնքային միավորումները.

A. հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ.
B. համայնքային ենթակայության հիմնարկի կարգավիճակ.
C. համայնքային ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

Ի՞նչ իրավունք ունի ավագանու անդամը.

A. սահմանելու շենքերի և շինությունների համարակալումը.
B. հրապարակելու համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումներն ու ուղերձները.
C. առաջարկություններ ներկայացնելու ավագանու նիստի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ:

Ի՞նչ իրավական ակտով են սահմանվում համայնքի ավագանու հանձնաժողովների քանակը, գործառույթները և ձևավորման կարգը.

A. համայնքի ղեկավարի որոշմամբ.
B. համայնքի ավագանու կանոնակարգով.
C. ՀՀ կառավարության որոշմամբ:

Ո՞վ է համարվում համայնքի բնակիչ.

A. այն անձը, որը բնակվում է տվյալ համայնքում.
B. այն անձը, որը ծնվել է տվյալ համայնքում.
C. այն անձը, որը հաշվառված է տվյալ համայնքի բնակչության ռեգիստրում:

Ի՞նչ ժամկետով է ընտրվում համայնքի ավագանին.

A. հինգ տարի ժամկետով.
B. չորս տարի ժամկետով.
C. յոթ տարի ժամկետով:

Ավագանու ո՞ր խմբակցությունը կարող է ունենալ մեկ փորձագետ և մեկ գործավար.

A. մինչև յոթ անդամ ունեցող խմբակցությունը.
B. բոլոր խմբակցությունները.
C. յոթից ավելի անդամ ունեցող խմբակցությունը:

Համայնքի ավագանու անդամն իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց ավագանու որոշմամբ կարող է ստանալ ամսական դրամական փոխհատուցում՝

A. ՀՀ ԱԺ պատգամավորի ամենամսյա պատգամավորական ծախսերի մինչև 30 տոկոսի չափով.
B. ՀՀ ԱԺ պատգամավորի ամենամսյա պատգամավորական ծախսերի 50 տոկոսի չափով.
C. նվազագույն աշխատավարձի չափով: